քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

48. Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնա-կցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

49. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

50 Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

51. «Քննության չի թույլատրվածե (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,

52. բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում էե գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

53. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

54. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

55. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

VII. Գնահատման սանդղակը և նշագրումը

56. ՎՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

57. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգվածե, կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

58. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

59. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս «Ակադեմիական ազնվության կարգեր») այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

VIII. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

60 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

61. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

62. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

63. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

64. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$\text{ԳԿ} = \sum (\text{Կրեդիտ})$$

65. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360 \cdot 500$ հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

66. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

67. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

68. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):

69. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

X. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

70. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

71. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

72. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

73. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

74. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

75. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

XI. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

76. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

77. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

78. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ («գերազանցե գնահատականներ»):

79. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

XII. Կրեդիտների փոխանցումը

80. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի»:

XIII. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

81. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

83. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ների) պատասխան(ներ)ը:

84. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

85. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կան ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

| Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը % | Հատկացվող միավորը | |
|----------------------------------------------------|-------------------|-----------------------------------------|
| | Դասախոսություն | Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք |
| 96-100 | 5 | 15 |
| 91-95 | 5 | 15 |
| 86-90 | 4 | 14 |

| | | |
|-------|---|----|
| 81-85 | 4 | 14 |
| 76-80 | 3 | 13 |
| 71-75 | 3 | 13 |
| 66-70 | 2 | 12 |
| 61-65 | 2 | 12 |
| 56-60 | 1 | 11 |
| 51-55 | 1 | 11 |
| 0-50 | 0 | 0 |

Հավելված 2

Ուսումնառության արդյունքների գնահատման 100 -միավորանոց սանդղակ

| Գնահատականը ըստ 5-բալանոց համակարգի | Գնահատականը ըստ 100- բալանոց համակարգի | Գնահատականը ըստ ECTS համակարգի |
|-------------------------------------|----------------------------------------|--------------------------------|
| «գերազանց» (5) | 96-100 | A ⁺ |
| «գերազանց» (5) | 91-95 | A |
| «գերազանց» (5) | 86-90 | A ⁻ |
| «լավ» (4) | 81-85 | B ⁺ |
| «լավ» (4) | 76-80 | B |
| « լավ» (4) | 71-75 | B ⁻ |
| «բավարար» (3) | 67-70 | C ⁺ |
| «բավարար» (3) | 62-66 | C |
| «բավարար» (3) | 58-61 | C ⁻ |
| «անբավարար» | 0-57 | D |
| «ստուգված» | 58-100 | S |
| «չստուգված» | 0-57 | U |

Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՄԻ կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Պատմաաշխարհագրական ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ:

Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով,

դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

030400 «Պատմություն և մասնագիտության տեղեկագիրք
I Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական
դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

Հ/բ-1007 Հայոց լեզու և գրականություն-1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հայեցի դաստիարակության խնդիրների լուծումը, ինչպես նաև ապագա մասնագետի գրավոր և բանավոր կիրթ խոսք մշակելու, ապագա ուսուցչի, գիտնական-հետազոտողի մոտ գործնական, գիտական ոճերին ծանոթացմամբ և կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները, համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը:
2. կկարողանա գործնականում կիրառել ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները:
3. կտիրապետի ՀՀ պետական լեզվի գործառույթների, կիրառական առանձնահատկությունների նորմերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայերենը որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու: Թեմա 2. Արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառներ: Զարգացման փուլերը: Թեմա 3. Հայերենագիտություն: Հայագիտական կենտրոններ: Թեմա 4. Ուղղագրություն և ուղղախոսություն: Թեմա 5. Գործնական գրություններ: Թեմա 6. Բառագիտություն.

բառապաշար և բառակազմություն: Թեմա 7. Մասնագիտական գրականության լեզվի առանձնահատկությունները: Մասնագիտական տերմինաբանություն: Թեմա 8. Խոսքի մասեր: Թեմա 9. ա/Շարահյուսական կապակցման եղանակներ և միջոցներ: Թեմա 10. բ / Բառակապակցություն և նախադասություն: /մշակում/: Թեմա 11. Կետադրություն: Թեմա 12. Ամփոփում :

Գ/բ 1141 Հայոց լեզու և գրականություն-2 (2 կրեդիտ)

(8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին «Գրականությունն առարկային վերաբերող գիտելիքներ հաղորդել, խորացնել և ընդլայնել հայ գրականության մասին ուսանողների ունեցած ընդհանուր գիտելիքները: Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ գրականության պատմությանը: Առաջնային նպատակ է նաև ուսանողներին գաղափար տալ հիմնական գրական ուղղությունների մասին՝ մասնավորապես կլասիցիզմի, ռոմանտիզմի, ռեալիզմի, սոց. ռեալիզմի, հիմնարար պատկերացում ձևավորել գրականության զարգացման վերաբերյալ ըստ դարաշրջանների, ուսումնասիրել մի շարք գրողների ստեղծագործությունները, անդրադառնալ դրանց կառուցվածքային և բովանդակային հատկանիշներին, գաղափարին և վերլուծությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կկարողանա

1. գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ գեղարվեստական երկերը,
2. անգիր հատվածներ ասել պոեզիայից,
3. զանազանել գրական մեթոդների և ուղղությունների տարբերակիչ սկզբունքները, ժանրային կառուցվածքները,
4. գրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր կարծիք հայտնել,
5. կտիրապետի գրական-գեղարվեստական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարման մասնակցելու կանոններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բանահյուսության գեղարվեստա-ճանաչողական գործառույթը: Թեմա 2. Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր: Թեմա 3 «Մասնա ծոերե էպոսը: Թեմա 4. Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգությաննե, Ֆրիկ, քնարերգությունը: Թեմա 5. Միջնադարյան տաղերգություն, հայրեններ: Թեմա 6. Աբովյանը և լուսավորական շարժումը: Թեմա 7. Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը: Թեմա 8. Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Բաֆֆու «Մամվելե վեպը: Թեմա 9. Գր. Զոհրապը և հայ նորավիպագրությունը: Թեմա 10. Շիրվանզադեի և հայ դասական ռեալիզմը: Թեմա 11. Թումանյան: Թեմա 12. Ավ . Իսահակյան: Թեմա 13. Թեմա 14. Վ. Տերյանի քնարերգությունը: Թեմա 15. Ե. Չարենցի պոեզիան: Թեմա 16. Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/ Թեմա 17. Սփյուռք - «Կարոտիե և «Նահանջիե գրականության ուրվագիծ / Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/: Թեմա 18. Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ / Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /:

Ռ/բ-0081 ռուսաց լեզու- 1(4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
2. ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
3. կիրառել ռուսաց լեզվի քերականական կառուցվածքը.
4. վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խաղաղության մշակույթ: ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը: Տեսական նյութ. Հնչյունաբանություն: Ռուսաց լեզվի հնչյունական համակարգը: ռուսերենի շեշտ: բանավոր և գրավոր խոսքի հնչերանգը:

Թեմա 2. Ռուսաց լեզուն որպես ՄԱԿ-ի աշխատանքային լեզուներից մեկը: Քերականական նյութ. Գոյականի քերականական սեռը: Ընդհանուր քերականական սեռի բառեր: Որոշյի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Մարդ: Դիմանկար: Բնավորություն: Ընտանիք: Քերականական նյութ. Որոշյի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում: Գոյականների հոլովները:

Թեմա 4. Տուն, բնակարան, քաղաք, որում ես ապրում եմ: Քերականական նյութ. Գոյականի թիվը: Եզակի թիվ, հոգնակի թիվ: Անեզական և անհոգնական գոյականներ:

Թեմա 5. Կրթություն: Կրթության համակարգը Հայաստանում: Քերականական նյութ. Ածական անուն: Որակական, հարաբերական և ստացական ածականներ: Ածականի համեմատական աստիճանները: Ամբողջական և կրճատ ձևերը: Նրանց կիրառությունը կապակցություններում և նախադասություններում: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 6. Երիտասարդությունը 21 դարում: Քերականական նյութ. Թվական անուն: Թվականի տեսակները, ուղղագրությունը, կապակցությունները և շարահյուսական դերը: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 7. Աշխատանքի նշանակությունը մարդու կյանքում: Քերականական նյութ. Դերանուն: Դերանունների տեսակները: Քերականական կառույցների կազմում:

Ռ/բ-0081 ռուսաց լեզու- 2(4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.
2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.
3. կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարճերին և շարահյուսական կառուցածքներին.
4. կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը(եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտություն և տեխնիկա: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղձական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: Թեմա 2. Մշակույթ և արվեստ: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղձական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: Թեմա 3. Առողջություն: Հանգիստ: Սպորտ: Ժամանց: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղձական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում: Թեմա 4. Բնություն: Բնապահպանություն: Էկոլոգիա: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Ժամանակի պարագա և տեղի պարագա: Կառավարման սկզբունքով կառուցված պարագայական կապակցություններ: Քերականական կառույցների կազմում: Թեմա 5. ՁԼՄ-ներ և դրանց դերը ռուսաց լեզվի ուսուցման գործում: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Քերականական կառույցների կազմում: Ծարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Թեմա 6. Հայրենիք: Մեր հանրապետությունը: Կենսաձևը Հայաստանում: Ծարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Կետադրություն:

Փ/բ-0478 Փիլիսոփայության հիմնահարցեր (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին գիտելիքներ տալ աշխարհայացքի, նրա տարատեսակների և ձևերի մասին, բացահայտել իրականության սկզբնապատճառը, զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, մեկնաբանել շարժման մեխանիզմը, ձևերը և դրանց դերը զարգացման գործընթացում: Ուսանողները գիտելիքներ են ստանում նաև հասարակության, նրա առանձնահատկությունների և գործառույթների մասին: ր:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. կտիրապետի փիլիսոփայության հետազոտության մեթոդներին,
3. կկարողանա ըմբռնել բնության և հասարակական օրենքների բնույթը,
4. կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
5. կկարողանա տարբերակել փիլիսոփայական տարբեր ուղղությունների առանձնահատկությունները:
6. որպես մեթոդաբանություն փիլիսոփայությունը կկիրառի այլ գիտությունների ուսումնառության ընթացքում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Փիլիսոփայությունը որպես գիտություն: Թեմա-2 Փիլիսոփայության զարգացման պատմական փուլերը: Թեմա-3 Մատերիա և կեցություն: Թեմա-4 Հոգևորի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: Թեմա-5 Չարգացման հիմնախնդիրը: Թեմա-6 Իմացության տեսություն: Թեմա-7 Գիտական իմացության յուրահատկությունը: Թեմա-8 Սոցիալական փիլիսոփայություն: Թեմա-9 Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: Թեմա-10 Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա-11 Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: Թեմա-12 Հասարակական գիտակցություն: Թեմա-13 Արժեքաբանության փիլիսոփայություն:

ԸՖԴ/բ0876 Մարմնակրթություն (1-4-րդ կիսամյակներ) (32-ական ժամ)

Կամընտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Փ/բ-1238 Մշակութաբանություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանանչելու, վերլուծելու և գնահատելու մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա

1. մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները:
Պետք է կարողանա
2. ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարրերի փոխներթափանցումները
3. ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները
4. ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները
5. մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում
6. ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ տիպի)
Պետք է տիրապետի
- 7.մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները: Թեմա 2. Մշակույթի բնորոշումը: Թեմա 3. Մշակույթի գործառույթները: Թեմա 4. Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ: Թեմա 5. Զանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 6. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Թեմա 7. Բնություն և մշակույթ: Թեմա 8. Հասարակություն և մշակույթ: Թեմա 9. Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները:

Հ/բ-0304 Սոցիոլոգիա (2 կրեդիտ)

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա

1.Տեսական գիտելիքներ

1. Սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, ֆունկցիաների, հիմնական խնդիրների, սոցիոլոգիական գիտելիքի բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ,
2. Հասարակության պատմական տիպերի, զարգացման օրինաչափությունների, հիմնական ընդհանրությունների եւ տարբերությունների, համակարգային մոտեցման, հասարակության՝ իբրեւ համակարգի՝ բազմամակարդակ կառուցվածքում գործառնող եւ փոխկախված տարրերի (անհատը՝ սոցիալական գործողություն կատարելու տեսանկյունից, խմբեր, կազմակերպություններ, ինստիտուտներ) վերաբերյալ,
3. Հասարակության վերահսկողության մեխանիզմների, դրանց փոխապայմանավորվածության վերաբերյալ,
4. Հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքի(շերտավորման), այն մեկնաբանող մոտեցումների, հիմնական շերտերի բնութագրի, մոբիլության, վերջինիս տեսակների, ըստ մոբիլության «բաց եւ «փակե հասարակությունների մեկնաբանման վերաբերյալ, գոբալացման, վերջինս մեկնաբանող մոտեցումների եւ հիմնական տեսությունների

(հիմաերիալիզմ (Հոբսոն), կախվածության տեսություն (Ֆրանկ), համաշխարհային համակարգի տեսություն (Վալերշտայն), ցանցային տեսություն (Կաստելա)), հոռմեական ակումբի, գլոբալ եւ գլոբալացնող ռիսկերի, ռիսկի հասարակության գաղափարի, գլոբալացման հիմնական գործիքների, աշխատուժի, տեխնոլոգիաների, կապիտալի հոսքերի, Մալթուսականության, Համահնչունայնացման խնդրի, համաշխարհային հասարակության աճող բարդացման վերաբերյալ:

5. Կիրառական սոցիոլոգիայի զարգացման պատմության, սոցիոլոգիական հետազոտության նախապատրաստման, անցկացման մշակման, ընդհանրացման ձևերի, հետազոտության հիմնական մեթոդների վերաբերյալ:
6. Բուն մասնագիտական գործնական կարողություններ
7. Վերլուծելու, սինթեզելու,
8. Կազմակերպելու, պլանավորելու,
9. Քննադատության, ինքնաքննադատության,
10. Տեղեկատվության կառավարման,
11. Նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու, մեկնաբանելու
12. Բազմաձևության, բազմամշակութայնության ընդունման,
13. Նոր գաղափարներ առաջադրելու
14. Յուրացված գիտելիքը տրամաբանորեն եւ հետեւողականորեն ներկայացնելու,
15. Առարկայի մեթոդները եւ տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու,
16. Տվյալ առարկայական ոլորտում հետազոտությունների արդյունքները գնահատելու կարողություններ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիոլոգիան իբրև գիտություն

1. Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները:
2. Սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքը:
3. Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը, առարկան, մեթոդները, ֆունկցիաները:
4. Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:
5. Սոցիոլոգիան հասարակական գիտությունների համակարգում:

Թեմա 2. Հասարակություն

1. Հասարակության պատմական ձևեր և տիպաբանական հիմքեր:
2. Հասարակության զարգացումը մեկնաբանող մոտեցումներ:
- 2.1. Հասարակությունն իբրև համակարգ:

Թեմա 3. Մշակույթ

1. <<Մշակույթ>> հասկացությունը, տարրերը, տեսակները:
2. Սոցիոմշակութային փոփոխություններ:

Թեմա 4. Սոցիալականացում

1. Ընդհանուր հասկացություն, տեսակներ:
2. Առաջնային սոցիալականացումը մեկնաբանող մոտեցումներ:
3. Սոցիալականացման հիմնական ազենտները:
4. Շեղվող վարք:

Թեմա 5. Հասարակության սոցիալական կառուցվածքը

1. Սոցիալական խմբեր և կազմակերպություններ:
2. Սոցիալական ինստիտուտներ. ընտանիքի ինստիտուտը:

Թեմա 6. Սոցիալական ստրատիֆիկացիա

1. Սոցիալական անհավասարություն, սոցիալական մոբիլություն, ստրատիֆիկացիոն դիրքեր, միջին դաս:
2. Ստրատիֆիկացիոն համակարգեր:
3. Սոցիալական ստրատիֆիկացիան մեկնաբանող դասական մոտեցումներ:

Կամընտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Փ/բ-0479 Իրավագիտություն

Նպատակը.

Իրավագիտություն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ իրավունքի և պետության ծագման, սոցիալական նորմերի հետ իրավանորմերի հարաբերակցության, պետության ձևի, կառուցվածքի, կառավարման ձևի, իրավունքի համակարգի, իրավահարաբերությունների, իրավունքի տարբեր ճյուղերի, այդ թվում սահմանադրական իրավունքի, ընտանեկան իրավունքի, միջազգային իրավունքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա

1. Իրավագիտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Պետության հասկացությունը և էությունը: Իրավական պետությունը և նրա հիմնական բնութագրերը: Պետության տիպերը և ձևերը: Պետության մեխանիզմը: Պետության գործառույթները: Պետությունը հասարակության քաղաքական համակարգում: Իրավունքի հասկացությունն ու էությունը: Իրավունքի ձևերը (աղբյուրները): Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Իրավագիտակցություն: Իրավունքի սկզբունքները և գործառույթները: Իրավունքի նորմ: Նորմատիվ իրավական ակտերը և նրանց համակարգումը: Իրավունքի նորմի մեկնաբանումը: Իրավունքի իրացումը: Իրավական հարաբերություններ: Իրավաչափ վարքագիծ և իրավախախտում: Իրավաբանական պատասխանատվություն: Իրավունքի համակարգը: Օրինականություն և իրավակարգ:

Պետք է կարողանա

2. հստակ պատկերացնել պետության և իրավունքի ծագման ընդհանուր օրինաչափությունները գործառույթները
3. ինքնուրույն կողմնորոշվել տարբեր տեսակետներում
4. որոշ տեսական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն հանգումներ

Պետք է տիրապետի

իրավագիտության կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին

5. բուհում իրավագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին
6. բուն մասնագիտական գործնական կարողությունների
7. գնահատման գործիքներ կիրառելու հմտությանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Պետության և իրավունքի առաջացումը: Թեմա 2. Պետության էությունը, գործառույթները և ձևերը: Թեմա 3. Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Թեմա 4. Սոցիալական նորմերի հասկացությունը և տեսակները: Թեմա 5. Իրավունքը և իրավագիտակցությունը: Թեմա 6. Օրինականությունը և իրավակարգը: Թեմա 7. Իրավունքի համակարգը: Թեմա 8. Իրավական պետություն: Թեմա 9. Սահմանադրական իրավունք: Թեմա 10. Սահմանադրական կարգ հասկացությունը:

S/բ1255 Տնտեսագիտություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին.
2. կհիմանա տնտեսագիտական գիտելիքների դերն ու գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում.
3. կկարողանա ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունները.
4. կհիմանա առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Թեմա 2. Ապրանքային արտադրություն: Ապրանք և փող: Թեմա 3. Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Թեմա 4. Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: Թեմա 5. Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Թեմա 6. Ձեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: Թեմա 7. Ծախքերի տեսությունը: Արտադրություն և ծախքեր: Թեմա 8. Շահույթ և շահութաբերություն: Ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: Թեմա 9. Ագրոարդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Թեմա 10. Կուտակում, սպառում և խնայողություն: Թեմա 11. Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Թեմա 12. Ինֆլյացիա և գործազրկություն: Թեմա 13. Դրամավարկային համակարգի էությունը: Բանկեր: Թեմա 14. Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Թեմա 15. Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Թեմա 16. Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

Փ/բ-0476 Քաղաքագիտություն

Նպատակը.

1. Ուսանողին տալ գիտելիքներ քաղաքականության, նրա էության, քաղաքական համակարգի, պետության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

2. Խորացնել և ընդլայնել գիտելիքները քաղաքական սուբյեկտների նրանց գործառնությունների վերաբերյալ:
3. Նախապատրաստել ուսանողին քաղաքականության մեջ տեսականորեն որոշ հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա քաղաքագիտության ուսումնասիրման օբյեկտը, կատեգորիալ համակարգը, հետազոտության մեթոդները, քաղաքագիտության ֆունկցիաները, քաղաքագիտության և հասարակական մյուս գիտությունների կապը, համաշխարհային քաղաքական մտքի պարբերացման սկզբունքները:
2. Կկարողանա հստակորեն պատկերացում կազմելու քաղաքականության, նրա էության ու կառուցվածքի վերաբերյալ, կատարել վերլուծություններ, համեմատություններ քաղաքագիտության բոլոր հարցերի վերաբերյալ, նորացնել և փոխանցել մասնագիտական գիտելիքը, նոր գաղափարներ առաջ քաշի, աշխատի թիմում:
3. Կտիրապետի քաղաքագիտություն առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին, Բուհում հասարակագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին, Գնահատման գործիքների կիրառելու հմտությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները: Թեմա 2 Քաղաքականության սուբյեկտի էությունը և ձևերը: Թեմա 3. Հասարակության իրավաքաղաքական համակարգը, նրա տիպերը: Թեմա 4. Պետություն, նրա տիպերը և ձևերը: Թեմա 5. Քաղաքական իշխանություն: Թեմա 6. Հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 8. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Թեմա 9. Քաղաքական մշակույթ, ձևերը և ֆունկցիաները: Թեմա10. Մարդու դերը քաղաքականության մեջ:

Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

OL0671 Օտար լեզու (Անգլերեն) -1 (4 կրեդիտ)

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.
2. կսովորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.

3. ձեռք կրերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Թեմա 4. Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը և այլն:

OL0671 Օտար լեզու (Գերմաներեն) – 1 – (4 կրեդիտ)

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել դպրոցում ձեռք բերած գիտելիքները գերմաներեն ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրության նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջորդ ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին

Բովանդակությունը.

Թեմա 1. Եղանակավորող բայեր, սուբյեկտային և օբյեկտային բայեր: Թեմա 2. Ածական անուն. Թեմա 3. Հոմանիշ և հականիշ բայեր: Ամենատարածված ասացվածքները գերմաներեն և հայերեն լեզուներով: Բառի բազմիմաստությունը. Թեմա 4. Ազատ թեմաների ինքնուրույն կազմում “Այսօր իմ ծննդյան օրն է”, “Իմ մասնագիտությունը”, “Գերմանիայի քաղաքները”, մի շարք բանաստեղծություններ Հ. Հայնեի, Վ. Գյոթեի ստեղծագործություններից:

OL0671 Օտար լեզու (Ֆրանսերեն) 1 - 4 կրեդիտ

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղաբանական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. կկարողանա ճիշտ հնչերանով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները. դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կկարողանա ընթերցել ադապտացված տեքստեր, հաղորդակցվել ֆրանսերենով:

Բովանդակությունը

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: Թեմա 2. Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: Թեմա 3. Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: Թեմա 4. Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Իգական սեռի և հոգնակի թվի կազմությունը: Թեմա 5 Թվական անուն : Թեմա 6. Հարցական ու ժխտական նախադասությունների կազմությունը: Թեմա 7 Ֆրանսերենի առավել գործածական նախդիրներն ու շաղկապները:

Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

OL0672 Օտար լեզու (Անգլերեն) - 2 (4 կրեդիտ)

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի

(անվանողական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

OL0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 2 – (4 կրեդիտ)

Նպատակը.

Հարստացնել ուսանողների գիտելիքները բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակով և ուսանողների բառապաշարային և քերականական գիտելիքները հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան արտահայտել իրենց մտքերը, առօրյա խոսակցական թեմաներով, ինչպես նաև կատարեն ազատ թարգմանություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա ունկնդրելով ճիշտ հասկանալ բանավոր խոսքը
2. կկարողանա գրել փոխադրություն
3. կկատարի համապատասխան թարգմանություն գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Բովանդակություն.

Թեմա 1. Գոյականների հոլովման համակարգը և հոլովների կիրառական նշանակությունը: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Թեմա 3. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է “Ես ուսանող եմ”, “Սուրճի սեղանի շուրջը” (վարվելաձևը սեղանի շուրջը), “Գրադարանում”, “Տարվա եղանակները”, “Իմ սիրելի գրողը”, “Հայաստանի պատմությունից”, “Գնումներ խանութում”, “Ընկերական շրջապատում” և այլն:

OL0672 Օտար լեզու (Ֆրանսերեն) 2 - 4 կրեդիտ

Նպատակը.

Խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերեն լեզվի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային պարզ հմտություններ, գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,
2. կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը,
3. կկարողանա գրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերը: Թեմա 2. 3-րդ խմբի հիմնական անկանոն բայերը: Թեմա 3. Հրամայական եղանակի կազմությունը: Թեմա 4. Դերանվանական բայեր: Թեմա 5. Ածական անուն, համեմատության աստիճանների կազմությունը: Թեմա 6. Դերանվանական ածականներ /ստացական, ցուցական, անորոշ Թեմա 7. Ֆրանսերենի բառակազմական միջոցները: Գործածական նախածանցներն ու վերջածանցները:

Կասրնորական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հիմնարար գիտելիքներով անգլերեն լեզվի քերականության ձևաբանության և շարահյուսության բաժինների և բանավոր խոսքի հիմունքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը

Թեմա 1 – Մակբայների համեմատության աստիճանը, Ածականների համեմատության աստիճանը: Թեմա 2 – Անգլերեն լեզվի ժամանակաձևերի ուսումնասիրություն, Ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևեր: Թեմա 3 – Միացյալ թագավորություն, աշխարհագրական բառապաշար, լրացուցիչ տեղեկություններ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության մասին: Թեմա 4 – Հոդերի կիրառությունը հատուկ անունների հետ, գոյականական ածանցներ

OL0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 3 – (4 կրեդիտ)

Նպատակը.

Զարգացնել ուսանողների գիտելիքները լեզվի կառուցվաքի, առանձնահատկությունների, խոսքամասային ձևերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կառուցել հստակ ու սահուն խոսք՝ ճիշտ կիրառելով գերմաներեն լեզվի ժամանակաձևերը
2. կկարողանա գրել շարադրություն

3. կկատարի համեմատաբար բարդ թարգմանություններ գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Բովանդակություն

Թեմա 1- Շեշտադրություն, ուղղագրություն, բառեր և քերականություն

Թեմա 2- Հոդը, գործածությունը, բայ, հրամայական եղանակ, բառեր, շարադասություն:

Թեմա 3- Ֆոնետիկական վարժություններ, օժանդակ բայերի գործածությունը որպես ինքնուրույն բայեր, հարցական նախադաս. շարադասությունը, վարժություններ և տեքստ:

Թեմա 4 - Ընթերցանության օրենքները, գոյական հոլովումը, դերանուն, բառակազմություն, արտասանություն, բառապաշարի ուսուցում: Գրավոր և բանավոր վարժություններ:

OL0673 Օտար լեզու (Ֆրանսերեն) 3 - 4 կրեդիտ

Նպատակը. Ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ֆրանսերենի բառապաշարի և քերականության վերաբերյալ ունեցած գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ընդհանուր հաղորդակցական նշանակության տեքստեր.
2. կկարողանա ֆրանսերեն լեզվով հաղորդակցվելառոյա թեմաների շուրջ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սահմանական եղանակի հիմնական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունն ու գործածությունը: Թեմա 2. Ժամանակների համաձայնեցումը: Թեմա 3.: Անդեմ բայեր ու արտահայտություններ : Թեմա 4. Դերանունների հիմնական տեսակները (ստացական, ցուցական, անորոշ, հարաբերական), դրանց քերականական կարգերի բնութագիրը: Թեմա 5. Մակբայների տեսակներն ու քերականական կարգերը:

II Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

ԻՏՄՄ/բ-1366 Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և աշխատանքի հիմնական սկզբունքներին: Ուսանողի մոտ ձևավորել համակարգչից օգտվելու հիմնական հմտությունները: Ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները.
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները.
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Գաղափար ինֆորմացիայի մասին: Ինֆորմացիայի չափի միավորները: Թեմա 2. Հաշվողական տեխնիկայի էվոլյուցիան: Պրոցեսոր: Թեմա 3. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Թեմա 4. Ներքին և արտաքին հիշողություն: Թեմա 5. MS Office ծրագրային համակարգը (MS Word, Excel ծրագրեր):

ԸՖՂ/բ-0875 Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

5-րդ կիսայակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների, բնական աղետների և վթարների դեպքում բնակչության պաշտպանության եղանակները, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման ուղիները և եղանակները, խոցման օջախում և բնական աղետների ու վթարների հետևանքների վերացման ժամանակ վթարա-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կազմակերպման և կատարման հիմունքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնակչության և քաղաքացիական պաշտպանության հիմունքները,
2. կտիրապետի հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցներից, բնական աղետներից և վթարներից բնակչության պաշտպանության եղանակներին ու միջոցներին,
3. կկարողանա կազմակերպել և իրականացնել պարապմունքներ հանրակրթական դպրոցների ցածր դասարանների աշակերտների հետ:

Բովանդակությունը.

Թեմա-1 Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կառավարման պետական միասնական համակարգը, իրավական նորմատիվ բազան: Թեմա-2 Արտակարգ իրավիճակները, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղիները: Թեմա-3 Հարձակման ժամանակակից զանգվածային և սովորական միջոցները: Թեմա-4 Քիմիական վարակման օջախները և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Թեմա-5 Ճառագայթային վարազման օջախները և ճառագայթային իրադրության գնահատումը: Թեմա-6 ԱԻ և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոցառումների կազմակերպումը: Թեմա-7 ԱԻ ռիսկի գնահատումը: Թեմա-8 ԱԻ և ՔՊ պլանների կազմման հարցերը: Թեմա-9 ԱԻ օպերատիվ միջոցառումների կազմակերպումը:

ԲԱ/բ 0913 Էկոլոգիա և Բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է. Խորացնել գիտելիքները և ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ <<Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ>> առարկայի վերաբերյալ, կրթել բնապահպանական և բնագիտական գիտելիքներով:

Կրթական արդյունքները.

1. կտիրապետի բնապահպանական, էկոլոգիական գիտելիքներին և մեթոդներին:
2. կկարողանա ճիշտ դաստիարակել աճող սերնդին էկոլոգիական և բնապահպանական կրթությամբ ու դաստիարակությամբ:
3. Ճիշտ կուսուցանի շրջակա միջավայրը անադարտ պահելու և գալիք սերունդներին փոխանցելու համար:

Բովանդակություն.

ԹԵՄԱ 1. Էկոլոգիան որպես գիտություն: ԹԵՄԱ 2. Բնակչության միջավայր: ԹԵՄԱ 3. Էկոլոգիական գործոններ: ԹԵՄԱ 4. Տեղախմբային էկոլոգիա: ԹԵՄԱ 5. Կենսահամակարգ ԹԵՄԱ 6. Էկոհամակարգեր ԹԵՄԱ 7. Կենսոլորտը որպես կենդանի համակարգերի կազմավորման բարձր մակարդակ ԹԵՄԱ 8. Էկոլոգիական համերկրային հիմնախնդիրներ, բնօգտագործում, բնապահպանություն: ԹԵՄԱ 9. Բնապահպանության հիմնահարցերը և խնդիրները ԹԵՄԱ 10. Հողոլորտ (լիթոսֆերա) ԹԵՄԱ 11. Ջրոլորտ (հիդրոլորտ) ԹԵՄԱ 12. Մթնոլորտ (աթմոսֆերա) ԹԵՄԱ 13. Բուսական աշխարհ (ֆլորա) ԹԵՄԱ 14. Կենդանական աշխարհ (ֆաունա) ԹԵՄԱ 15. Բնական պաշարների օգտագործման, պահպանության և հարստացման խնդիրները ԹԵՄԱ 16. Մարդու բնապահպանություն

Կամրնտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Կ 0876 Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում

Նպատակը

Առարկայի հիմնական նպատակն է ուսանողների տալ գիտելիքներ հիվանդությունների առաջացման և կանխարգելման , առողջ ապրելակերպի կանոնների , արտակարգ իրավիճակներում գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու մասին :Դասընթացի խնդիրն է զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար :Առարկայի խնդիրն է ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա.

1. Հիվանդությունների առաջացման պատճառները և կանխարգելիչ միջոցառումները
2. Արտակարգ իրավիճակներում կողմնորոշված և ճիշտ բուժօգնություն կազմակերպելու կանոնները
3. Առողջ ապրելակերպի կանոնները

պետք է կարողանա.

1. Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում:
2. Տիրապետի առաջին օգնության կազմակերպման կանոններին
3. Կատարել ստամոքսի լվացում, վիրակապում, բեկակալների տեղադրում, հոգնա,
4. Ջերմաչափում, պուլսի որոշում, զ/ճ չափում
5. Այրվածքի մակերեսի և խորության որոշում
6. Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժվածի մոտ
7. Լարանի ճիշտ տեղադրում

պետք է տիրապետի.

8. Առողջ ապրելակերպի կանոններին
9. Տիրապետի արտակարգ իրավիճակներում և կենցաղում ճիշտ , գրագետ , արագ բուժօգնություն կազմակերպելու կանոններին
10. Տիրապետի հիգիենայի կանոններին
11. Տիրապետի հիվանդի/ տուժվածի/ խնամքի կանոններին :

Բովանդակություն.

Թեմա 1. Հասկացություն հիվանդության մասին: Թեմա 2 Միրտ-անոթային համակարգի հիվանդություններ: Թեմա 3. Շնչառական համակարգի հիվանդություններ: Թեմա 4. Մարսողական համակարգի հիվանդություններ: Թեմա 5. Միզասեռական համակարգի հիվանդություններ : Թեմա 6. Թունավորումներ: Թեմա 7 Վնասվածքներ: Թեմա 8. Ջերմային խանգարումներ: Թեմա 9. Արյունահոսություն Թեմա 10. Վիրակապություններ: Թեմա 11. Վերակենդանացման միջոցառումներ: Թեմա 12. Առողջ ապրելակերպի

կանոնները: Թեմա 13. Սեռավարակներ: Թեմա 14. Անվտանգ սեռական կապեր: Թեմա 15. Պրոֆեսիոնալ հիվանդություններ Թեմա 16. Ինֆեկցիոն հիվանդություններ:

Կ 1426 Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն

Նպատակը.

1. Անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին և մինչբժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ
2. Տուժածի վիճակի վերահսկում
3. Տուժվածի և հիվանդի խնամքի կանոնների յուրացում

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա.

1. Տուժածի վիճակը վերահսկելու կանոնները
2. Հիվանդությունների առաջացման պատճառները և կանխարգելիչ միջոցառումները
3. Արտակարգ իրավիճակներում կողմնորոշված և ճիշտ բուժօգնություն կազմակերպելու կանոնները

պետք է կարողանա.

4. Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում:
5. Տիրապետի առաջին օգնության կազմակերպման կանոններին
6. Կատարել վիրակապում, լարանի տեղադրում, բեկակալների տեղադրում
7. Կատարել ստամոքսի լվացում, հոգնա,
8. Ջերմաչափում, պուլսի որոշում, գ/ճ չափում
9. Այրվածքի մակերեսի և խորության որոշում
10. Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժվածի մոտ
11. Տուժածի տեղափոխում
12. պետք է տիրապետի.
13. Կարողանա գիտական հարցերի վերբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ
14. Տիրապետի Առողջ ապրելակերպի կանոններին
15. Տիրապետի արտակարգ իրավիճակներում և կենցաղում ճիշտ , գրագետ , արագ բուժօգնություն կազմակերպելու կանոններին
16. Տիրապետի հիգիենայի պահպանման կանոններին
17. Տիրապետի տուժվածի խնամքի կանոններին

Բովանդակություն.

Թեմա 1. Հասկացություն հիվանդության մասին: Հիվանդի քննության մեթոդները: Թեմա 2. Միրտ-անոթային համակարգի հիվանդություններ: Թեմա 3. Շնչառական համակարգի հիվանդություններ: Թեմա 4. Մարսողական համակարգի հիվանդություններ: Թեմա 5. Թունավորումներ: Թեմա 6. Վնասվածքներ: Թեմա 7. Ջերմային խանգարումներ: Թեմա 8. Արյունահոսություն: Թեմա 9. Վիրակապություններ: Վերակենդանացման միջոցառումներ: Թեմա 10. Առողջ ապրելակերպի կանոնները: Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ: Ինֆեկցիոն հիվանդություններ:

III Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

Հ/բ-0300 Հոգեբանություն ¥2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ, ¥24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

1. Ուսանողներին զինել գիտելիքներով հոգեբանության մասին:
2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, հոգեբանական և մեթոդական գիտելիքները:
3. Ուսանողներին գաղափար տալ հոգեբանության առարկայի, խնդիրների, հոգեկանի և հոգեկան գործընթացների զարգացման օրինաչափությունների մասին:
4. Սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն և ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:
Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կցուցաբերի հոգեբանության առարկայի, հոգեբանության հիմնական մեթոդների իմացություն,
2. դրսևորի գիտելիքներ իմացական և հուզականային գործընթացների, անձի հոգեկան վիճակների ու հատկությունների վերաբերյալ:

Բովանդություն

Թեմա1. Ընդհանուր հոգեբանության առարկան, ծագումն ու զարգացում **Թեմա2.** Ժամանակակից հոգեբանության կառուցվածքը և մեթոդները **Թեմա3.** Հոգեկանի և գիտակցության ծագումն ու զարգացումը **Թեմա4.** Անձնավորություն **Թեմա5.** Գործունեություն **Թեմա6.** Խումբ և կոլեկտիվ **Թեմա7.** Հաղորդակցում և խոսք **Թեմա8.** Ուշադրություն **Թեմա9.** Զգայություն **Թեմա10.** Ընթրնում **Թեմա11.** Հիշողություն **Թեմա12.** Մտածողություն **Թեմա13.** Երևակայություն: Երևակայության դերը ստեղծագործական գործունեության մեջ: **Թեմա14.** Հույզեր և զգացումներ **Թեմա15.** Կամք **Թեմա16.** Բնավորություն **Թեմա17.** Խառնվածք **Թեմա18.** Ընդունակություններ

Մ/բ- 1102 Մանկավարժություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ապագա ուսուցիչներին զինել մանկավարժական գիտելիքներով, ձևավորել որոշակի կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև տալ պատկերացումներ մանկավարժական գործընթացի, օրինաչափությունների, ուսուցման ու դաստիարակության սկզբունքների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա վերլուծել մանկավարժական գործընթացը
2. իր տեսական գիտելիքները կհամադրի առաջավոր մանկավարժական փորձի, համագործակցության, մանկավարժության դրական նվաճումների հետ:

Բովանդակություն.

Թեմա 1. Մանկավարժի մասնագիտության բնութագիրը: Թեմա 2. Մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները: Թեմա 3. Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: Թեմա 4. Դաստիարակության նպատակը և խնդիրները : Թեմա 5. Ուսուցման գործընթացի էությունը: Թեմա 6. Ուսուցման մեթոդները Թեմա 7. *Գիտելիքների ստուգում և գնահատում:* Թեմա 8. Դաստիարակության գործընթացի էությունը Թեմա 9. Դաստիարակության մեթոդները Թեմա 10. Սովորողների աշխարհայացքի ձևավորումը: Թեմա 11. Անձի դաստիարակությունը կոլեկտիվում: Թեմա 12. Դպրոցավարություն: Դպրոցի կառավարման հիմունքներ:

Ո/բ-001 Հայոց պատմություն-1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ հայ ժողովրդի կազմավորման, հայկական հին և միջնադարյան պետականությունների հաստատման վերաբերյալ

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կԿարողանա ներկայացնել հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ առկա գիտական մեկնաբանությունները,
2. կկարողանա վերլուծաբար մոտենալ հայոց հին և միջին շրջանի պատմությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1 Հայ ժողովրդի կազմավորումը: Թեմա 2 Արարատյան թագավորություն: Թեմա 3 Երվանդունիների թագավորությունը (Ք.ա. VI-II դարեր): Թեմա 4 Հայկական թագավորությունների անկախության վերականգնումը: Արտաշեսյանների թագավորությունը: Թեմա 5 Հայաստանը աշխարհակալ պետություն: Թեմա 6 Պայքար պետականության ամրապնդման համար՝ Տիգրան Մեծի հաջորդների օրոք: Թեմա 7 Արշակունիների թագավորությունը Հայաստանում I-III դարերում: Թեմա 8 Հայկական մշակույթը Ք.ա. II Ք.հ. I դարերում: Թեմա 9 Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը Հայաստանում: Թեմա 10 Ազատագրական պատերազմները V դարում:

Ո/բ-002 Հայոց պատմություն-2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել հայ ազային ազատագրական շարժման V-IX դարերի պատմության, արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի VIII– IX դդ. ազատագրական պայքարի, IV–IX դարերում հայկական մշակույթի, սելջուկ-թուրքերի դեմ հայ ժողովրդի պայքարի, Չաքարյանների իշխանության հաստատման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա պատմական փաստերը համադրել, համակողմանի գնահատել երևույթները
2. հստակ պատկերացում կունենա Արշակունյաց, Բագրատունյաց հարստությունների առանձնահատկությունների վերաբերյալ

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայաստանը VI դարում: Թեմա 2. Հայաստանը VII դարում: Թեմա 3. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ VIII– IX դարերում: Թեմա 4. Հյակական մշակույթը IV–IX դարերում: Թեմա 5. Հայաստանի անկախության վերականգնումը: Թեմա 6. Հայոց թագավորությունը խաղաղ զարգացման և տնտեսական վերելքի ժամանակաշրջանում: Թեմա 7. Բագրատունյաց թագավորության թուլացումը և անկումը: Թեմա 8. Հայ ժողովրդի պայքարը սելջուկ-թուրքերի դեմ: Թեմա 10. Հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրումը. Չաքարյանների իշխանությունը: Թեմա 11. Հայաստանը մոնղոլական նվաճումների ժամանակաշրջանում: Թեմա 12. Հայկական մշակույթը IX-XIV դարի առաջին կեսը:

Ո/բ-003 Հայոց պատմություն-3 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել Կիլիկյան հայկական իշխանության ու պետության, օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի, ուշ միջնադարյան ժամանակաշրջանի առանձնահատկությունների,:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. հստակ պատկերացում կունենա Կիլիկիայի հայոց պետականության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին,
2. կպատկերացնի հայ իրականության մեջ ուշ ավատատիրական հարաբերությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ հայոց պատմության 11-14 դարերի իրադարձությունները
4. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կիլիկիայի հայկական իշխանությունը և պետությունը: Թեմա 2. Հայկական գաղթավայրերը (IX–XVI դարի կեսեր): Թեմա 3. Հայաստանը ավատատիրության վայրէջքի ժամանակաշրջանում:

Պ/բ-004 Հայոց պատմություն-4 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորդել հայ ազատագրական պայքարի առաջին քայլերի, հնդկահայ և ռուսահայ համայնքի ազատագրական գործունեության, Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի, Խամսայի մելիքությունների կազմավորման, Նադիր Շահի՝ հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ներկայացվող ժամանակաշրջանի պատմության հիմնախնդիրները,
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ հայոց պատմության 14-19 դարերի իրադարձությունները
3. ճիշտ կպատկերացնի հայ ազատագրական շարժման նախադրյալները

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայ ազատագրական շարժման առաջին քայլերը: Թեմա 2. Հայկական գաղթավայրը (XIV դարի կեսերից- XVII դարի կեսեր): Թեմա 3. Հայկական մշակույթը (XIV դարի կեսեր-XV դար): Թեմա 4. Ազատագրական ուղիների որոնումներն Արևելյան Հայաստանում: Թեմա 5. Հայ ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին: Հովսեփ Էմին: Թեմա 6. Հայկական հարցը, առաջացումը, բովանդակությունը: Թեմա 7 Քաղաքական կացությունը Անդրկովկասում XVIII դարի վերջին քառորդին: Գեորգիևսկի ռոա-վրացական պայմանագիրը:

Պ/բ-005 Հայոց պատմություն-5 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել XIX դարի սկզբի իրադարձությունների, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմական իրողության ու դրա նշանակության, Հայկական Մարզի, 19-րդ դարի առաջին կեսին արևմտաօսման սոցիալ-տնտեսական, քաղաքական դրության, Արևմտահայ սահմանադրական շարժման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. հստակ պատկերացում կկազմի 19 դարի սկզբի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների և դրանց արդյունքների վերաբերյալ

2. կունենա ամբողջական գիտելիքներ 19-րդ դարի առաջին կեսին արևմտաօստրալիական սոցիալ-տնտեսական, քաղաքական դրության վերաբերյալ,
3. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռուսաստանի տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում Թեմա 2 Արևելյան հարցը XIX դարի սկզբին Թեմա 3 1804-1813թթ.ռուս-պարսկական պատերազմը: Թեմա 4 1806-1812թթ.ռուս-թուրքական պատերազմը: Թեմա 5 1826-1828թթ.ռուս-պարսկական և Թեմա 6 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմները: Թեմա 7 Ռուսական տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում:

Պ/բ-006 Հայոց պատմություն-6 (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել XIX դարի սկզբի իրադարձությունների, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմական իրողության ու դրա նշանակության, Հայկական Մարզի, 19-րդ դարի առաջին կեսին արևմտաօստրալիական սոցիալ-տնտեսական, քաղաքական դրության, Արևմտահայ սահմանադրական շարժման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա ամբողջական գիտելիքներ 19-րդ դարի առաջին կեսին արևմտաօստրալիական սոցիալ-տնտեսական, քաղաքական դրության վերաբերյալ,
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 3. Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: Թեմա 4. Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Թեմա 5. Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Թեմա 6. Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: Թեմա 7. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 8. Հայկական հարցը և մեծ տերությունները 1890-ական թվականներին: Թեմա 10. Ազգային-ազատագրական պայքրի նոր մարտավարությունը: Թեմա 11. Արևելյան Հայաստանը 1905-1914թվականներին: Թեմա 12. Արևմտյան Հայաստանը 1908-1914 թվականներին: Թեմա 13. Հայաստանը I համաշխարհային պատերազմի տարիներին: Հայոց Մեծ եղեռնը: Թեմա 12. Հայաստանը 1917թ. Փետրվարյան հեղափոխության շրջանում: Թեմա 13. Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: Թեմա 14. Հայկական գաղթավայրերը (XVIII դարի կեսեր-XX դարի սկզբներ): Թեմա 15. Հայկական մշակույթը XVII դարի երկրորդ կեսից-XVIII դարի վերջը: Թեմա 16. Հայկական մշակույթը XIX դարի առաջին կեսին: Թեմա 17. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին:

Պ/բ-007 Հայոց պատմություն-7 (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Առարկայի նպատակն է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության, Խորհրդային Հայաստանի 70 տարիների պատմական բազմաբովանդակ իրադարձությունների, խորհրդային Հայաստանի՝ տնտեսական և մշակութային կյանքում ձեռք բեռած հսկայական նվաճումների, ԽՍՀՄ փլուզման օբյեկտիվ օրինաչափություններ, Արցախյան շարժման պատմական հանգամանքների. Ադրբեջանա-Արցախյան պատերազմում արցախցիների տարած հաղթանակների, Արցախի անկախության և Այսրվա ձեռքբերած նվաճումների, Հայաստանի Երրորդ հանրապետության պատմության մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա

1. Հայաստանի Առաջին հանրապետության կարևորագույն իրադարձությունների մասին
2. Խորհրդային Հայաստանի պատմությունը
3. Արցախյան ազատագրական պայքարը և նրա նվաճումները

Թեմա 1. Հայկական անկախ պետականության ստեղծումը: Թեմա 2. Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: Թեմա 3. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Թեմա 4. Հայկական հարցը 1919-1920 թթ.: Թեմա 5. Հայ-ռուսական հարաբերությունները: Թեմա 6. Թուրք-հայկական պատերազմը: Թեմա 7. Հայաստանի Հանրապետության անկումը: Հայաստանի խորհրդայնացումը: Թեմա 8. Խորհրդային Հայաստանը 1920–1922թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1922–1941թթ.: Թեմա 10. Խորհրդային Հայաստանի մշակույթ 1920-1941թթ.: Թեմա 11. Հայկական սփյուռքը 1920–1941թթ. Թեմա 10 Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945թթ.): Թեմա 11. Խորհրդային Հայաստանը 1946–1991թթ.: Թեմա 12. Խորհրդային Հայաստանի մշակույթը 1945-1991թթ.: Թեմա 13 Սփյուռքը 1946–1991թթ.: Թեմա 14. Անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն: Թեմա 15. Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1991-2000թթ.: Թեմա 16. Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1991-2000թթ.: Թեմա 17. Հասարակական-քաղաքական կյանքը: Թեմա 18 Հայկական սփյուռքը 1991–2000թթ.: Թեմա 19. Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հռչակումը և կայացումը: Թեմա 20 Ադրբեջանա-Ղարաբաղյան պատերազմը: Թեմա 21 ՀՀ ներքին դրությունը: Թեմա 22. ՀՀ միջազգային դրությունը:

Պ/բ-008 Հնագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Առարկայի նպատակն է ըստ մշակույթի պեղածո մնացորդների տալ հասարակության զարգացման օրինաչափությունները, ուսանողներին ծանոթացնել հնագիտության ուսումնասիրության աստիճաններին, ցույց տալ հնագիտության տեղն ու դերը հիմնարար գիտությունների շարքում: «Հնագիտությունն առարկայի նպատակն է նաև ուսանողներին ծանոթացնել այլ գիտությունների կապի անհրաժեշտությանը հնագիտության հետ և Հայկական լեռնաշխարհի ու աշխարհի հիմնական հնավայրերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա բացատրել յուրաքանչյուր մշակութային փուլի առանձնահատկությունները
2. կյուրացնի հնագիտության տեսության խնդրացանկը
3. կիմանա, թե ինչ է հնագիտական շերտագրությունը և ժամանակագրությունը, հնագիտական համալիրը
4. կընկալի հնագիտական պեղումների, պարբերացման և պատմամշակութային գործընթացների տրամաբանությունը
5. կկարողանա կատարել վերլուծական բնույթի պատմա-հնագիտական աշխատանք, պտրաստ կլինի գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Ներածություն, Թեմա-2 Հնագիտության ուսումնասիրության աստիճանները: Թեմա-3 Հնագիտական ժամանակագրություն և շերտագրություն: Թեմա-4 Հնագիտական նյութերի ժամանակը (տարիքը) որոշելու մեթոդները: Թեմա-5 Պալեոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Վերին կամ ուշ պալեոլիթի ժամանակաշրջանը: Թեմա-6 Հայկական լեռնաշխարհի պալեոլիթյան և ուշ պալեոլիթյան հնավայրերը: Թեմա-7 Մեզոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Հայաստանի մեզոլիթը: Թեմա-8 Նեոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Նեոլիթյան հեղափոխությունը (Հայաստանի նեոլիթը): Թեմա-9 Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի նեոլիթյան հնավայրերը: Թեմա-10 Էնեոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան հուշարձանները: Թեմա-11 Բրոնզի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները: Հայաստանի և Կովկասի բրոնզեդարյան հնավայրերը: Թեմա-12 Երկաթի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները: Կովկասի և Հայկական լեռնաշխարհի երկաթի դարի հնավայրերը: Թեմա-13 Խաչքարեր. Խաչքարային արվեստի զարգացման փուլերը: Թեմա-14 Վիշապ (ձկնակերպ) քարակոթողներ: Թեմա-15 Ժայռապատկերներ (Հայաստանի ժայռապատկերները): Թեմա-16 Հայկական պատկերաքանդակները (Դավիթ Աղուդիի մահարձան-կոթողը): Թեմա-17 Հայաստանի հնագիտության ուսումնասիրության պատմությունից:

Պ/բ-009 Հայաստանի պատմական աշխարհագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ Պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքի, տարբեր դարաշրջաններում նրա տարածքում գոյություն ունեցած վարչա-քաղաքական միավորների, դրանց սահմանների, ներքին վարչա-տարածքային բաժանման համակարգերի, ճանապարհների, պատմա-մշակութային նշանավոր վայրերի ու հուշարձանների, դարերի ընթացքում Պատմական Հայաստանի տարածքում կատարված ժողովրդագրական փոփոխությունների և այլնի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կատարել Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն
2. Կկարողանա ներկայացնել Հայկական լեռնաշխարհը որպես հնդեվրոպական նախահայրենիքի մի մասն և հայ ժողովրդի բնօրրան
3. Կկարողանա Հայաստանի պատմական զարգացման համատեքստում արժևորել նրա ըստ նահանգների և ըստ գավառների բաժանման համակարգերը,
4. կկարողանա ճիշտ մեկնաբանել դրանց դերը հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Հայկական լեռնաշխարհի սահմանները, բնակլիմայական պայմանները, ռելիեֆը: Թեմա-2 Պատմական Հայաստանի վարչա-քաղաքական վիճակը հնագույն ժամանակներից մինչև Ք.ա. IV դարը: Թեմա-3 Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Օռփքի և Կոմմագենեի թագավորությունները Ք.ա. III-I դար Ք. հ.: Արշակունիների թագավորությունը: Թեմա-4 Այրարատ: Թեմա-5 Տուրուբերան: Թեմա-6 Վասպուրական : Թեմա-7 Բարձր Հայք: Թեմա-8 Օռփք: Թեմա-9 Աղձնիք: Թեմա-10 Տայք: Թեմա-11 Սոկք, Կորդուք: Թեմա-12 Պարսկահայք: Թեմա-13 Սյունիք: Թեմա-14 Արցախ, Ուտիք: Թեմա-15 Փայտակարան: Թեմա-16 Հայաստանի վարչա-քաղաքական կազմությունը V-VII դարերում: Թեմա-17 Հայաստանի վարչա-քաղաքական կազմությունը VIII-XIII դարերում:

Պ/բ-010 Ազգագրություն - (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ տարբեր պատմա-աշխարհագրական շրջանների էթնիկական միավորների էթնոգենեզի պատմության, տվյալ շրջանում տարածված լեզվաընտանիքների և նրանց մեջ մտնող ժողովուրդների, վերաբերյալ, ծանոթացնել տվյալ շրջանի ժողովրդագրական (դեմոգրաֆիական) պատկերին, տնտեսամշակութային տիպերին, կիրառական արվեստին, ընտանիքի ձևերին և սոցիալական հարաբերություններին և այլ հիմնախնդիրներին:

Դասընթացի նպատակն է նաև ներկայացնել ազգագրության հիմնադրույթները, առարկայի տեղը գիտությունների համակարգում և կապն այլ գիտությունների հետ, աշխարհի ժողովուրդների դասակարգման և էթնոմշակութային զարգացման սկզբունքներն ու առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կկազմի էթնոսների և էթնո-սոցիալական օրգանիզմների մասին, նրանց բնորոշ որակների, ինչպես նաև էթնիկական պրոցեսների մասին
2. կիմանա ազգագրության, որպես գիտություն ձևավորման, կայացման ու զարգացման պատմությունը, ծանոթ կլինի արդի ազգագրական-մարդաբանական հետազոտությունների հիմնական ուղղություններին ու արդյունքներին,
3. ծանոթ կլինի էթնիկ հանրությունների դասակարգման սկզբունքներին և կիմանա աշխարհի էթնիկ քարտեզն՝ ըստ էթնոլեզվաընտանիքների, լեզվախմբերի և խոշոր էթնիկ հանրությունների,

Բովանդակությունը.

Թեմա-1 Էթնոս հասկացությունը. էթնոսոցիալական օրգանիզմներ Թեմա-2 Էթնիկական պրոցեսները և նրանց տեսակները Թեմա-3 Ժողովուրդների դասակարգումը ըստ լեզվաընտանիքների Թեմա-4 Ժողովուրդների դասակարգումը ըստ տնտեսամշակութային տիպերի Թեմա-5 Ժողովուրդների դասակարգումը ըստ ռասսաների Թեմա-6 Ասիայի ժողովուրդները: Թեմա-7 Ժողովուրդների դասակարգումը ըստ ազգագրական-աշխարհագրական շրջանների: Թեմա-8 Ազգագրության որպես գիտության պատմությունը Թեմա-9 Ավստրալիայի և օվկիանիայի ընդհանուր բնութագիրը, էթնոգենեզը, տնտեսամշակութային տիպերը: Թեմա-10 Ավստրալիայի և Մելանեզիայի, ժողովուրդները: Թեմա-11 Պոլինեզիայի և Միկրոնեզիայի ժողովուրդները Թեմա-12 Արևմտյան Ասիայի էթնոգենեզը, լեզվաընտանիքները, տնտեսամշակութային տիպերը Թեմա-13 Արևմտյան Ասիայի ժողովուրդների նյութական և հոգևոր մշակույթը Թեմա-14 Հարավային Ասիայի էթնոգենեզը, լեզվաընտանիքները, Թեմա-15 Հարավային Ասիայի ժողովուրդների նյութական և հոգևոր մշակույթը Թեմա-16 Հարավ- Արևելյան Ասիայի էթնոգենեզը, լեզվաընտանիքները, Թեմա-17 Հարավ- Ասիայի ժողովուրդների նյութական և հոգևոր մշակույթը

Պ/բ-011 Հայ ազգագրություն- (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգաբք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտելիքներ տալ հայ ազգագրության սկզբնաղբյուրների վերաբերյալ, ծանոթացնել, հայ ազգագրության՝ որպես գիտության ձևավորման պատմությանը և հետագա զարգացմանը: հայ ազգագրության ձևավորման փուլերի, հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ ազգագրության ձևավորման ու գիտության վերածվելու պատմության երեք փուլերին,
2. ծանոթ կլինի հայ ժողովրդի հոգևոր մշակույթին, տարբեր ծիսակատարություններին, առանձնահատկություններին:

3. պատկերացում կկազմի հայ ժողովրդական բանահյուսության, ժողովրդական երգերի ու պարերի, ինչպես նաև հայերի հեթանոսական դիցարանի և այլ հիմնախնդիրների մասին
4. կկարողանա ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Հայ ազգագրության սկզբնաղբյուրները: Թեմա-2 Հայ ազգագրությունը որպես գիտության ձևավորում: Թեմա-3 Հայ ազգագրության զարգացումը 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Թեմա-4 Տնտեսական կենցաղը Թեմա-5 Արհեստները Հայաստանում Թեմա-6 Բնակավայրերը և կացարանների տեսակները Հայաստանում Թեմա-7 Ազգային տարազը Հայաստանում Թեմա-8 Ամուսնությունը և ընտանեկան կենցաղը Հայաստանում Թեմա-9 Հին հավատալիքները Հայաստանում

Պ/բ-012 Հայոց պատմության աղբյուրագիտություն- (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է բազմակողմանիորեն ուսումնասիրել հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրներ հանդիսացող տարալեզու վիճակագիր սկզբնաղբյուրները, օտարազգի և հայ հեղինակների գրավոր աշխատությունները, ներկայացվել դրանց հեղինակների ինքնության, ապրած ժամանակաշրջանի, քաղաքական-գաղափարական կողմնորոշման և կանխակալությունների հարցերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1 կկարողանա դասակարգել պատմական սկզբնաղբյուրներն ըստ ստեղծման ժամանակի, ձևի, ժանրի
- 2 կկարողանա բացահայտել հեղինակի սոցիալ-դասային, քաղաքական-կուսակցական, կրոնական կանխակալությունները,
- 3 կկարողանա պարզել պատմական սկզբնաղբյուրի նախնական տեքստի ամբողջության, նրա բնագրի և ժամանակի ընթացքուն նրանում կատարված ներմուծում-փոփոխությունների հարցերը,
- 4 կկարողանա կատարել հայոց պատմության վերաբերյալ տարբեր աղբյուրների հաղորդած փաստերի համակարգում և տեսական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա-1 Աղբյուրագիտություն առարկան և նրա տեղը պատմական օժանդակ գիտությունների շարքում: Թեմա-2 Խեթա-ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունները: Բեհիսթունյան արձանագրությունը: Թեմա-3 Հայաստանի տարածքում հայտնաբերված արամեերեն, հունարեն և լատիներեն վիճակագիր սկզբնաղբյուրները: Թեմա-4 Հունական գրավոր սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թեմա-5 Հռոմեական գրավոր սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թեմա-6 Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս: Եղիշե, Ղազար Փարպեցի: Թեմա-7 Մովսես Խորենացի, Սեբեոս: Թեմա-8 Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Հովհաննես Դրասխանակերտցի: Թեմա-9 IV-XI դարերի Բյուզանդական սկզբնաղբյուրները:

Պ/բ-013 Ռուսաստանի պատմության աղբյուրագիտություն- (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Ռուսաստանի պատմության աղբյուրագիտության հիմնախնդիրների հետ, ավելի խոր պատկերացում կազմել Ռուսաստանի պատմության տարբեր հիմնախնդիրների մասին

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա աղբյուրագիտական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման սկզբունքները,
2. ձեռք կբերի սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ:
3. պատկերացում կկազմի Ռուսաստանի պատմության աղբյուրագիտության մասին

Բովանդակությունը.

Թեմա-1 Արևելյան սլավոնների 6-10-րդ դարերի պատմության աղբյուրները: Թեմա-2 Կիևյան Ռուսիայի և մասնատվածության շրջանի աղբյուրները Թեմա-3 Ռուսաստանի 14-17-րդ դարերի պատմության սկզբնաղբյուրները: Թեմա-4 Ռուսաստանի 18-րդ դարի պատմության սկզբնաղբյուրները: Թեմա-5 18-րդ դարի հրապարակախոսական աշխատությունները և մամուլը որպես սկզբնաղբյուրներ: Թեմա-6 Հ19-րդ դարի արխիվները որպես պատմական սկզբնաղբյուրներ Թեմա-7 19-րդ դարի առաջին կեսի արտաքին քաղաքականության աղբյուրները: Թեմա-19-րդ դարի առաջին կեսի հրապարակախոսությունը և քաղաքական աշխատությունները: Թեմա-9 Հիշողությունները , օրագրերը և նամակագրությունը որպես է9-րդ դարի առաջին կեսի աղբյուրներ Թեմա-10 օրենսդրական ակտերը և գործավարության նյութերը Թեմա-11 խորհրդային շրջանի արտաքին և ներքին քաղաքականության հիմնական փաստաթղթերը

Պ/բ-014 Նախնադարյան հասարակության պատմություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ երկրագնդի երկրաբանական պարբերացման, մարդու մարդացման, համայնական հասարակարգի կառուցվածքի և զարգացման գործընթացների և օրինաչափությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ներկայացնել երկրագնդի երկրաբանական պարբերացումը և մարդու մարդացման գործընթացը
2. կկարողանա ներկայացնել նախնադարյան համայնքի կառուցվածքային փոփոխությունները՝ մարդկային հոտից մինչև հայրական տոհմական համայնքգիտելիքներ կունենա հոմինիդների բրածո ներկայացուցիչների, նրանց տարածման տիրույթների և աշխատանքային գործունեության մասին

Բովանդակությունը.

Թեմա-1 Ներածություն (առարկան և խնդիրները): Թեմա-2 Երկրագնդի պատմության երկրաբանական պարբերացումը: Թեմա-3 Մարդկության զարգացման հասարակական աստիճանները: Թեմա-4 Մարդու մարդացման պարբերացումը նախնադարում: Թեմա-5 Մարդկային հոտի և մայրական տոհմական համայնքի ժամանակաշրջան: Թեմա-6 Հայրական տոհմական համայնքի ժամանակաշրջան: Թեմա-7 Երկրագործության զարգացումը Հայկական լեռնաշխարհում (հողագործություն, անասնապահություն, պտղաբուծություն):

Պ/բ-015 Հին Արևելքի պատմություն (6 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (60 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել հիմնավոր գիտելիքներ հինարևելյան քաղաքակրթությունների ձևավորման ու զարգացման մասին, ամբողջական պատկերացում տալ վաղ ստրկատիրական հասարակարգի, հնագույն պետությունների քաղաքական, սոցիալ-տնտեսական կարգի, գաղափարախոսության և մշակույթի մասին, լուսաբանել հնագույն դինաստիաների պատմությունը, բացահայտել հինարևելյան պետականությունների անկման պատճառները

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ներկայացնել Հին Արևելքի պատմության տեղն ու դերը պատմական գիտությունների շարքում
2. Կտիրապետի Հին Եգիպտոսի պատմությանը:
3. Կտիրապետի Միջագետքի հնագույն պետությունների՝ Շումերի և Աքքադի պատմությանը
4. Կտիրապետի Արևելյան Միջերկրականի հնագույն քաղաքակրթությունների՝ Իսրայելա-հուդական թագավորության, Սիրիայի (Ասորիք), Փյունիկիայի և Կարթագենի պատմությանը:
5. կկարողանա նրանց պատմության կոնկրետ փաստերն ու իրողությունները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների դիտանկյունից

Բովանդակությունը.

Թեմա-1. Հին Արևելքի պետությունն առարկան, նրա աղբյուրները և հնագիտական ուսումնասիրությունները: Վաղ ստրկատիրությունը Հին Արևելքի երկրներում: Թեմա-2. Հին Եգիպտոսի պատմության պարբերացումը: Եգիպտոսի հին բնաշխարհը և բնակչությունը: Եգիպտոսն Արիսայիկ և Վաղ թագավորության ժամանակաշրջանում: Թեմա-3. Եգիպտոսը Հին և Միջին թագավորության ժամանակաշրջաններում: Հին Եգիպտոսի մշակույթը: Թեմա-4. Եգիպտոսը Նոր և Ուշ թագավորության ժամանակաշրջաններում: Թեմա-5. Միջագետքի հնագույն պետությունները՝ Շումեր և Աքքադ: Թեմա-6.

Միջազգետքը Ք.ա. II հազարամյակում: Բաբելոնի Հին թագավորությունը: Համնուրապի: Թեմա-7. Բաբելոնի Նոր թագավորության ստեղծումը, հզորացումը և նրա անկումը: Թեմա-8. Ասորեստանի աշխարհակալ տերությունը: Թեմա-9. Խեթական թագավորությունը Ք.ա. XVIII-XIIդդ.: Թեմա-10. Մարաստանը (Մեդիան) Ք. ա. VIII-VI դարերում: Թեմա-11. Աքեմենյան տերությունը: Թեմա-12. Հին Չինաստանը: Թեմա-13. Հին Հնդկաստանը:

Պ/բ-016 Հին Հունաստանի և Հռոմի պատմություն (6 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (60 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել «Անտիկ աշխարհե հասկացության ժամանակային և տարածական ընդգրկման, նրա պատմության պարբերացման վերաբերյալ: Լուսաբանել Էգեյան քաղաքակրթության առանձնահատկությունները, դորիական ցեղերի գաղթից հետո «հունական աշխարհի պատմական զարգացման գործում կատարված բեկման, հանգամանքները, հումբրոսյան և արիստիկ դարաշրջաններում Հունաստանում կատարված սոցիալ-քաղաքական փոփոխությունների և դրանց արդյունքում՝ համակեցության հունական յուրահատուկ ձևի՝ պոլիսի ձևավորման պատմական գործընթացը, մեկնաբանել նրա կառուցվածքի, արժեհամակարգի և գաղափարախոսության իրողությունները, ինչպես նաև միջպոլիսային հարաբերությունները, որոնք անտիկ աշխարհի կարևորագույն քաղաքական գործոններից էին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1 կկատարի Հին Հունաստանի և Հռոմի պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն,
- 2 Կկարողանա տեսնել անտիկ քաղաքակրթության և հին Էգիպտական, փոքրասիական, արևելյան քաղաքակրթությունների ձևավորման ու զարգացման պրոցեսների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները,
3. կկարողանա նկատել անտիկ պոլիսի և ժամանակակից պետությունների միջև առկա քաղաքական, իրավական, սոցիալ-հոգեբանական, մշակութային և բազմաթիվ այլ ընդհանրությունները և ճիշտ գնահատել դրանց պատճառները:

Բովանդակությունը.

Թեմա-1 Հին Հունաստանի պատմության և քաղաքա-կրթության ներածություն: Թեմա-2 Կրետեն և Աքքայան Հունաստանը Ք.ա. III-II հազարամյակներում: Թեմա-3 Դորիական ցեղերի գաղթը և կրետեական թալասոկրատիայի անկումը: Թեմա-4 Հունաստանի տնտեսությունն ու հասարակական հարաբերությունները Ք.ա.VIII-VI դդ.: Թեմա- 5 Հունական մեծ գաղութացումը: Թեմա- 6 Վաղ հունական տիրանիան: Թեմա- 7 Սպարտական պետության սոցիալ-քաղաքական կառուցվածքը Ք.ա.VIII-VI դդ.: Թեմա-8 Սպարտական դաստիարակությունը և բարոյական արժեքները: Սպարտայի հեգեմոնիայի հաստատումը Պելոպոնեսում Ք.ա. VIII-VI դդ.: Թեմա-9 Հույն-պարսկական պատերազմները: Թեմա-10 Եվպատրիդների տիրապետությունը Աթենքում Ք.ա. VIII-VI դդ.: Թեմա-11 Սոլոնի բարեփոխումները: Թեմա-12 Պիսիստրատի տիրանիան և

Կլիսթենեսի բարեփոխումները: Թեմա-13 Աթենական պետությունը Պերիկլեսի դարաշրջանում: Պերիկլեսի արտաքին քաղաքականությունը: Թեմա-14 Հին հունական պոլիսը և նրա կառուցակազմիկ առանձնահատկությունները: Թեմա-15 Պելոպոնեսյան պատերազմը: Թեմա-16 Հունաստանը Ք.ա. V դ. վերջին և IV դ. առաջին կեսին: Թեմա-17 Դասական դարաշրջանի հունական մշակույթը: Թեմա-18 Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքը: Հելլենիստական Եգիպտոսը, Սելևկյանների տերությունը, Պերգամոնը, Հռոդոսը և Անտիգոնյան Մակեդոնիան: Թեմա-19 «Հելլենիզմ» հասկացությունը: Հելլենիստական մշակույթը: Թեմա-20 Հին Հռոմի պատմության և քաղաքակրթության ներածություն: Թեմա-21 Հին Հռոմի պատմության ուսումնասիրության աղբյուրները: Թեմա-22 Հռոմը վաղ պատմական դարաշրջանում՝ Ք.ա VIII-VI դդ.: Թեմա-23 Պատրիկների և պլեբեյների պայքարը Ք.ա. VI-III դդ.: Հռոմեական Հանրապետության ձևավորումը: Թեմա-24 Հռոմի շուրջ Իտալիայի միավորման սկիզբը: Թեմա-25 Հռոմեական մշակույթը Ք.ա. IV-I դարերում: Թեմա-26 Հռոմի վերածվելը միջերկրածովյան հզորագույն տերության: Թեմա-27 Ներքաղաքական կյանքը Հռոմեական Հանրապետությունում Ք.ա. II դարի երկրորդ կեսին. Գրակոսյան ռեֆորմացիան: Թեմա-28 Հանրապետական կարգի ճգնաժամը Ք.ա. I դարի 80-60-ական թթ.: Թեմա-29 Առաջին եռապետությունն ու քաղաքացիական պատերազմը Կեսարի ու Պոմպեոսի միջև: Թեմա-30 Հուլիոս Կեսարի դիկտատուրան: Թեմա-31 Քաղաքացիական պատերազմը հանրապետականներ և կեսարականների միջև: Երկրորդ եռապետությունը: Թեմա-32 Երկրորդ եռապետության քայքայումը: Թեմա-33 Օգոստոսի պրինցիպատի հաստատումը Հռոմում: Թեմա-34 Դասական դարաշրջանի հռոմեական մշակույթը:

Պ/բ-017 Միջին դարերի պատմություն-1 (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել միջնադարի վերաբերյալ հիմնավոր գիտելիքների համակարգ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա Միջնադարյան պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքներ
2. կկարողանա կատարել պատմական երևույթների փաստերի վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա-1. Միջին դարերի պատմություն առարկան, նրա պարբերացումը և աղբյուրները:

Թեմա-2. «Բարբարոսների» հասարակությունը և նրա էթնիկ խմբերը: Թեմա-3.

Արևմտահռոմեական կայսրության անկումը և բարբարոսական թագավորությունների կազմավորումը: Թեմա-4. Ֆրանկական պետությունը V դ. վերջից մինչև IX դ. առաջին կեսը): Թեմա-5. Եվրոպայի քաղաքական քարտեզում IX-XI դարերում տեղի ունեցած փոփոխությունները: Թեմա-6. Ֆրանսիան IX-XI դարերում: Թեմա-7. Գերմանիան IX-XI

դարերում: Թեմա-8. Անգլիան VII-XI դարերում: Միասնական թագավորության կազմավորումը: Թեմա-9. Խաչակրաց շարժումը XI-XIII դարերում: Թեմա-10. Բյուզանդական կայսրությունը IV-VI դարերում: Թեմա-11. Բյուզանդական կայսրությունը VI դ. վերջերից մինչև IX դ. առաջին կեսը: Թեմա-12. Բյուզանդական կայսրությունը IX դ. II կեսից մինչև XI դ. վերջը: Թեմա-13. Բյուզանդական կայսրությունը XI դ. վերջից մինչև XIII դ. սկիզբը: Թեմա-14. Բյուզանդական կայսրությունը XIII-XV դ. կեսերին: Թեմա-15. Ֆրանսիան XI-XIV դարերում: Թեմա-16. Հարյուրամյա պատերազմն Անգլիայի և Ֆրանսիայի միջև (1337-1453թթ.): Թեմա-17. Անգլիան XI-XIII դարերում: Թեմա-18. Անգլիան XIV-XV դարերում: Թեմա-18 Արևմտյան և հարավային սլավոնները VI-XI դարերում: Թեմա-19 Վերածնունդը և հումանիզմը Իտալիայում: Թեմա-20 Մշակույթը IV-XIII դարերում:

Պ/բ-018 Միջին դարերի պատմություն-2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է լուսաբանել եվրոպական միջնադարյան հասարակությունների սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր կյանքը, Բյուզանդական կայսրության պատմությունը, իսլամական շարժման, աշխարհագրական մեծ հայտնագործությունների, վերածննդի և հումանիզմի գաղափարների տարածման, ռեֆորմացիայի, պետականությունների կազմավորման ու զարգացման, ազատագրական շարժումների, ֆեոդալական ճնշման ու կեղեքման դեմ ուղղված գյուղացիական ապստամբությունների, քաղաքների ինքնավարության համար մղած պայքարի պատմությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1 կունենա Միջնադարյան պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների
- 2 կկարողանա կատարել պատմական երևույթների փաստերի վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա-1. Միջին դարերի պատմության «Ուշ ֆեոդալիզմի դարաշրջանի» հիմնական հատկանիշներն ու առանձնահատկությունները: Թեմա-2. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Թեմա-3. Գերմանիան XVI դարում և XVII դարի սկզբին: Թեմա-4. Շվեյցարիան XIII-XVI դարերում: Թեմա-5. Ռեֆորմացիան և Հակառեֆորմացիան Եվրոպայում: Թեմա-6. Նիդերլանդները V-XVI դարերում: Թեմա-7. Նիդերլանդական հեղափոխությունը (1566-1609թթ.): Թեմա-8. Անգլիան XVI-XVII դարի առաջին կեսին: Թեմա-9. Ֆրանսիան XVI-XVII դ. առաջին կեսին: Թեմա-10. Արևմտաեվրոպական մշակույթը XVI-XVII դարերում:

Պ/բ-019 Եվրոպայի պատմություն (XVI-XIX դդ)-1 (8 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (80 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար)
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ «Նոր պատմություն» հասկացության ձևավորման, նրա պարբերացման, ժամանակագրության, հասարակական առաջընթացի օրինաչափությունների, նոր դարաշրջանի քաղաքակրթության, լուսավորության հասարակական մտքի ձևավորման, Եվրոպայի երկրների XVI-XIX դարերի իրադարձությունների և համաշխարհային պատմության մեջ դրանց խաղացած դերի մասին, 1815թ. Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտի հիման վրա Եվրոպայում հաստատված աշխարհաքաղաքական նոր վիճակի, դրան հաջորդած ժամանակաշրջանում միջազգային հարաբերությունների, Եվրոպական ժողովուրդների հեղափոխական, ազգային – ազատագրական պայքարի ու շարժումների, դրանց ունեցած հասարակական-քաղաքական հետևանքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կոնկրետ տեսական գիտելիքները կիրառել պատմական իրողությունները հասկանալու համար
2. կկարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից
3. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար
4. կունենա պատմագիտական հետազոտություններ կատարելու ունակություններ
5. կկարողանա ցույց տալ արևելյան և արևմտյան հասարակությունների տարբերությունները:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Նոր պատմություն» առարկան: Եվրոպան XVII դ. կեսերին, պատմական զարգացման հիմնական միտումները: Թեմա-2 XVII դ. անգլիական բուրժուական հեղափոխությունը: Թեմա-3 Անգլիան Ստյուարտների վերահաստատման օրոք 1688թ. պետական հեղաշրջումը: Թեմա-4 Ֆրանսիան XVII դ. 2-րդ կեսին – XVIII դարում: Թեմա-5 Իսպանիան XVII դ. 2-րդ կեսին – XVIII դարում: Թեմա-6 Իտալիան XVII դ. 2-րդ կեսին – XVIII դարում: Թեմա-7 Գերմանական պետությունները XVII դ. 2-րդ կեսին – XVIII դարում: Թեմա-8 Սկանդինավյան երկրները XVII – XVIII դարում: Թեմա-9 Ավստրիան XVII դ. 2-րդ կեսին – XVIII դարում: Թեմա-10 Միջազգային հարբերությունները 1640-1789թթ.: Թեմա-11 XVIII դարի ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը: Թեմա-12 Ֆրանսիական թերմիդորյան կառավարման և դիրեկտորիայի ժամանակաշրջանում: Թեմա-14 Ֆրանսիան հյուպատոսության և կայսրության տարիներին: Նապոլեոնյան պատերազմները: Թեմա-15 Վիեննայի վեհաժողովը: Սրբազան դաշինքի ստեղծումը: Թեմա-16 Անգլիան ֆրանսիական մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների տարիներին: Թեմա-17 Ավստրիան ֆրանսիական մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների տարիներին: Թեմա-18 Իտալիան ֆրանսիական մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների տարիներին: Թեմա-19 Գերմանական պետությունները ֆրանսիական մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների տարիներին: Թեմա-20 Իսպանիան ֆրանսիական մեծ հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների տարիներին: Թեմա-21 1820-1821թթ հեղափոխությունը Իտալիայում: Թեմա-22 1820-1823թթ հեղափոխությունը Իսպանիայում:

Ո/բ-020 Եվրոպայի պատմություն (XVI-XIX դդ)-2- (7 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (64 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակողմանի գիտելիքներ տալ <<Նոր պատմություն>> հասկացության ձևավորման, նրա պարբերացման, ժամանակագրության, հասարակական առաջընթացի օրինաչափությունների, նոր դարաշրջանի քաղաքակրթության, լուսավորության հասարակական մտքի ձևավորման, Եվրոպայի երկրների XVI-XIX դարերի իրադարձությունների և համաշխարհային պատմության մեջ դրանց խաղացած դերի մասին, 1815թ. Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտի հիման վրա Եվրոպայում հաստատված աշխարհաքաղաքական նոր վիճակի, դրան հաջորդած ժամանակաշրջանում միջազգային հարաբերությունների, եվրոպական ժողովուրդների հեղափոխական, ազգային – ազատագրական պայքարի ու շարժումների, դրանց ունեցած հասարակական-քաղաքական հետևանքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի համաշխարհային պատմության ընթացքի, փուլերի և պատմական մտքի զարգացման վերաբերյալ
2. կկարողանա կատարել պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն
3. կկարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները
4. կկարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային կրոնների ազդեցությունը
5. կունենա սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ

Բովանդակությունը.

Թեմա-1 Անգլիան 1815-1847թթ.: Թեմա-2 Ֆրանսիան 1815-1847թթ.: Թեմա-3 Ավստրիան 1815-1847թթ. Թեմա-4 Գերմանական պետությունները 1815-1847թթ. Թեմա-5 Իտալիան 1815-1847թթ.: Թեմա-6 Իսպանիան 1815-1854թթ.: Թեմա-7 1848-1849թթ հեղափոխությունը Ֆրանսիայում: Թեմա-8 1848-1849թթ հեղափոխությունը Գերմանիայում: Թեմա- 9 1848-1849թթ հեղափոխությունը Ավստրիայում: Թեմա-10 1848-1849թթ հեղափոխությունը Իտալիայում: Թեմա-11 Շվեդիան XIX դարում: Թեմա-12 Դանիան XIX դարում: Թեմա-13 Հոլանդիան XIX դարում: Թեմա-14 Շվեյցարիան XIX դարում: Թեմա-15 Բելգիան XIX դարում : Թեմա-16 Անգլիան 1850-1860-ական թթ: Թեմա-17 Ֆրանսիան 2-րդ կայսրության տարիներին: Թեմա-18 Ավստրիան 1850-1860-ական թթ: Ավստրո-հունգարիայի կազմավորումը: Թեմա-19 Գերմանիայի միավորումը: Թեմա-20 Իտալական ազգային պետության կազմավորումը: Թեմա-21 Ինքնուրույն պետությունների կազմավորումը Բալկանյան երկրներում: Թեմա-22 Ֆրանս-պրուսական պատերազմը: Թեմա-23 Ֆրանսիան 1870-1900թթ. Թեմա-24 Անգլիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը 1870-1900թթ. Թեմա-25 Գերմանիան 1870-1900թթ: Թեմա-26 Իտալիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը 1870-1900թթ. Թեմա-27 Իսպանիան

1870-1900թթ.: Թեմա-28 Ավստրիո-Հունգարիան 1870-1900թթ.: Թեմա-29 Սկնդինավյան երկրները 1870-1900թթ.

Պ/բ-021 Ամերիկայի պատմություն- (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Ամերիկայի երկրների պատմությունը գաղութային նվաճումներից սկսած մինչև մեր օրերը: Ներկայացնել ԱՄՆ-ի՝ որպես պետության ծագման, կայացման պատմությունը, աշխարհում առաջատար դիրք գրավելը, Լատինական Ամերիկայի երկրների ազատագրական պայքարը, անկախ պետությունների կայացման գործընթացը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Ամերիկայի երկրների պատմությունը
2. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1. Անգլիայի Հյուսիսամերիկյան գաղութների անկախության համար պատերազմը: ԱՄՆ-ի կազմավորումը Թեմա 2. Ամերիկայի Միացյալ Նահանգները XIX դարի առաջին կեսին Թեմա 3. Լատինական Ամերիկայի երկրները XVI-XIX դարերում Թեմա 4. 1861-1865թթ. քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում և Հարավի վերակառուցումը Թեմա 5. ԱՄՆ-ը 1870-1900թթ. Թեմա 6. Լատինական Ամերիկան 1870-1918թթ. Թեմա 7. ԱՄՆ-ը «նոր իմպերիալիզմի դարաշրջանում» /1901-1921թթ./ Թեմա 8. ԱՄՆ-ը 1921-1939թթ. ԱՄՆ-ի տնտեսական և ներքաղաքական վիճակը: Թեմա 9. ԱՄՆ-ը երկրորդ աշխարհամարի տարիներին/ 1939-1945թթ./ Թեմա 10. ԱՄՆ-ը «սառը պատերազմի տարիներին Թեմա 11. ԱՄՆ-ը 1977-2012թթ. Թեմա 12. Արգենտինան 1918-2012թթ. Թեմա 13. Բրազիլիան 1918-2012թթ. Թեմա 14. Մեքսիկան 1918-2012թթ. Թեմա 15. Չիլին 1918-2012թթ. Թեմա 16. Կուբան 1918-2012թթ

Պ/բ-022 Եվրոպայի պատմություն (XX-XXI դդ) (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել XX դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմությունը: Տալ քաղաքակրթության զարգացման տիպաբանությունը ինչպես Եվրոպական աշխարհամասում, այնպես էլ Ամերիկյան մայրցամաքում, ներկայացնել հասարակության զարգացման վերաբերյալ երկու հակադիր գաղափարախոսությունների բախումներն ու տրնսֆորմացիան:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա XX դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները,
2. կհասկանա XX դարում գերիշխող գաղափարախոսությունների էությունը:
3. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար:

Բովանդակությունը.

Թեմա-1 Միջազգային հարաբերությունները XXդ. սկզբին: Թեմա-2 Ֆրանսիան 1871-1914թթ.: Թեմա-3 Գերմանիան 1871-1914թթ.: Թեմա-4 Անգլիան1871-1914թթ.: Թեմա-5 Իտալիան 1871-1914թթ.: Թեմա 6. Սկանդինավյան երկրները 1900-1914թթ. Թեմա-7Միջազգային հարաբերությունների սրումը I աշխարհամարտի նախօրեին, ռազմական խմբավորումների ձևավորման ավարտը: Թեմա-8 Առաջին համաշխարհային պատերազմը Թեմա-9 Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: Թեմա 10.Միջազգային դրությունը Եվրոպայում 1920-1930-ական թթ. Թեմա-11 Գերմանիան1918-39թթ.: Թեմա 12 Մեծ Բրիտանիան 1918-1939 թթ. Թեմա-13 Ֆրանսիան1918-39թթ.:Թեմա-14 Իտալիան1918-39թթ.: Թեմա 15. Իսպանիան 1918-1939թթ. Թեմա 18. Երկրորդ համաշխարհային պատերազմը Թեմա 19. Միացյալ ազգերի կազմակերպությունը Թեմա 19. Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սառը պատերազմ Թեմա 20. Եվրոպայի երկրների զարգացման հիմնական միտումները 1945-2000թթ. Թեմա 21. Եվրոմիություն. կառուցվածքը, գործունեությունը

Պ/բ-023 Պատմական օժանդակ առարկաներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (26 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել պատմական օժանդակ առարկաների առարկայի և մեթոդների հետ:Դասընթացի նպատակն է նաև գիտելիքներ տալ պատմության օժանդակ գիտությունների՝ դրամագիտության, վիճակագրության, տոմարագիտության, զինանշանագիտության, չափագիտության, վեքսիլոգիայի, գենեոլոգիայի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դրամների հանդես գալու, նրանց շրջանառության սկզբունքները, դրամագիտության գիտական խնդիրները,
2. կտիրապետի տոմարագիտության, զինանշանագիտության, չափագիտության, վեքսիլոգիայի, գենեոլոգիայի հիմնական սկզբունքներին,
3. կկտիրապետի արձանագրությունների տոմարական հաշվարկներին, արձանագրությունների գիտական հրատարակման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա-1 Ժամանակագիտություն, Թեմա-2 Մետրոլոգիա, Թեմա-3 Նումիզմատիկա, Թեմա-4 Օնոմաստիկա Թեմա-5 Սֆոագիստիկա, Թեմա-6 Վեքսիլոգիա, , Թեմա-7 Հերալդիկա,

Ո/բ-024 Հայոց պատմության պատմագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4,5 ժամ (36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել մեր ազգային պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախագրային շրջանի պատկերացումներից, մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի հայ պատմագրության առանձնահատկությունները, զարգացման իր ուրույն ընթացքն ու փուլերը,
2. կհասկանա հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման ընթացքը,
3. կընկալի հայոց պատմության պատմագրության խնդիրները, գիտելիքներ ձեռք կրերի պատմագիտական հետազոտությունների տիպերի մասին:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Հայ ժողովրդի պատմության պատմագրությունն առարկան: Հայոց պատմության պատմագրության պարբերացումը: Թեմա-2 Հայ քննական պատմագրության սկզբնավորումը. Մ. Չամչյան: Ղ. Ինճիճյանի և Հ. Գաթրճյանի Մ. Էմինի պատմագիտական ժառանգությունը: Թեմա-3 Ա. Գարագաշյանի, Ղ. Ալիշանի, Ա. Երիցյանի և Ստ. Պալասանյանի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-4 Ք. Պատկանյանի, Ս. Եղիազարովի, Գ. Խալաթյանցի, Մ. Օրմանյանի, Ստ. Նազարյանցի պատմագիտական-հասարակագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-5 Հայաստանն ու հայ ժողովուրդը Ի. Շոպենի, Ն. Դուրրովինի, Վ. Պոտոյի, Հ. Լինչի պատմագիտական աշխատություններում: Թեմա-6 Հ. Տաշյանի, Գ. Անանյանցի, Հ. Աստուրյանի, Ն. Ակինյանի, Հ. Արմենի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-7 Ստ. Շահումյանի, Գ. Ղարաջանի, Բ. Բորյանի, քաղաքագիտական-պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-8 Ն. Ադոնցի, Լեոյի, Հ. Մանանդյանի, Ա. Ջիվելեգովի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-9 Ա. Հովհաննիսյանի, Ա. Աբրահամյանի, Մ. Ներսիսյանի, Ծ. Աղայանի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-10 Ս. Երեմյանի և Գ. Սարգսյանի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները: Թեմա-11 5-18 -րդ դարերի հայ ազատագրական շարժումների պատմագրությունը: Թեմա-12 Հայկական հարցի նախախորհրդային պատմագրությունը: Թեմա-13 19-րդ դ. վերջերի և 20-րդ դ. սկզբների հայ ազատագրական շարժման պատմագրությունը: Թեմա-14 Հայ հասարակական-քաղաքական հոսանքների, քաղաքական կուսակցությունների պատմագրությունը: Թեմա-15 Հայկական հարցի խորհրդային պատմագրությունը: Թեմա-16 Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության պատմագրությունը: Թեմա-17 Խորհրդային Հայաստանի պատմության պատմագրությունը:

Ո/բ-024 Ռուսաստանի պատմության պատմագրություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Ռուսաստանի պատմության ուսումնասիրման պատմագրությանը, պատմագիտական տարբեր դպրոցների գնահատականներին: Պատմագրության տիրապետումը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել ամբողջական ընկալել պատմական գործընթացները և խորապես ուսումնասիրել պատմական գիտության պատմությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կողմնորոշվել Ռուսաստանի պատմության պատմագրության տարբեր ուղղությունների մեջ,
2. կկարողանա ամբողջական պատկերացում կազմել պատմական գործընթացների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա-1 Ռուսական պատմության սկզբնաղբյուրները: Թեմա -2 Պատմական գիտելիքների զարգացումը XV-XVII դդ.: Թեմա-3 Ազնվականական պատմագրության ձևավորումը XVII դարի վերջերին և XVIII դարի առաջին կեսին: Թեմա-4 Ազնվականական պատմագրության զարգացումը և բուրժուական պատմագրության ձևավորումը XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբներին: Թեմա -5 Ազնվականական և լիբերալ պատմագրությունը XIX դարի 50-70-ական թվականներին: Թեմա-6 Ազնվականական, լիբերալ և դեմոկրատական պատմագրությունը XIX դարի երկրորդ կեսին: Թեմա-7 Ռուսական պատմագրության զարգացումը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին: Թեմա -8 Մարքսիստական ուղղության ձևավորումը ռուսական պատմագրության մեջ: Թեմա- 9 Խորհրդային պատմագրության ձևավորումը և զարգացումը 1920-1930-ական թվականներին: Թեմա-10 Խորհրդային պատմագրությունը 1950-1980-ական թվականներին: Թեմա -11 Ռուսական պատմագրությունը արդի շրջանում:

Պ/բ-025Նոր պատմության պատմագրություն (նոր և նորագույն շրջան)(3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (38 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային պատմության ուսումնասիրության պատմագրությանը, պատմագիտական տարբեր դպրոցների գնահատականներին: Պատմագրության տիրապետումը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել ամբողջական ընկալել պատմական գործընթացները և խորապես ուսումնասիրել պատմական գիտության պատմությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կողմնորոշվել համաշխարհային պատմության պատմագրության տարբեր ուղղությունների մեջ,
2. կկարողանա ամբողջական պատկերացում կազմել պատմական գործընթացների վերաբերյալ:

Բովանդակությունը.

